

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԹԷ ԳԻՏՆԱՆ . . .

Մեր հանգուցեալ յայտնի կրթական վաստակաւորներէն մէկը, որուն կեանքը տառապանքներու շարք մ'եղած էր, առիթով մը այսպէս կ'արտայայտուէր. «Եթէ գիտնալին թէ իմ մէջ» հերոս մը կայ, այսպէս չպիտի վարուէին հետս»: Այս խօսքը մասնաւոր իմաստով մը կրնայ ըստիւ նաեւ իւրաքանչիւր անհատին համար. ամէն մարդու մէջ հերոս մը ըլլալու կարելիութիւնը պահուած է, ամէն մարդ վեհագոյն նկարագրի ընդունակութեամբ օժտուած է: Բոլոր կրթական հաստատութիւններու հաւատքին եւ յոյսին հիմը կը կազմէ այս ճշմարտութիւնը. եթէ մարդ այսպիսի կարելիութիւնէ մը զուրկ եղած ըլլար՝ բոլոր կրթիչ ազդակներու, փոխակերպիչ եւ վերացուցիչ հաստատութիւններու գոյութիւնը անհասկնալի եւ անիմաստ եղած պիտի ըլլար: Շատ անգամ կրկնուած եւ ծանօթ զարձած այս տարրական ճշմարտութիւնը պէտք է առաջին տեղը գրաւէ մեր մանկավարժական սկզբունքներուն մէջ:

Մեր բոլոր վարժարանները սկսած են իրենց կանոնաւոր գործունէութեան, եւ ուրախ ենք որ անցեալ տարւեանէն աւելի մեծ թիւով ուսումնասիրող մանուկներ լեցուցած են դա-

տարանները: Պատասխանատու մարմինները եւ կրթական պաշտօնեաները իրենց լաւագոյնը ընելու կ'աշխատին լաւ կրթուած սերունդ մը պատրաստելու համար: Բայց յաջող եւ արդիւնաւոր դաստիարակութեան մը համար կ'ուզենք յիշեցնել՝ թէ գնահատումի հոգի մը, մանուկներու թաքուն կարողութեանց հանդէպ յարգանքի զգացում մը պէտք է արտա-ցոյց դաստիարակներու անձերէն: Կրթութեան երկու մեծագոյն ազդակներն են առաջին՝ մանուկին ներքին միտումները, ընազդները, ամեն տեսակ կարողութիւնները, եւ երկրորդ՝ միջավայրը, այսինքն այդ ներքին ընդունակութիւնները զարգացնելու, փոխելու, ուղղելու համար պէտք եղած արտաքին պայմանները: Միջավայրը շինող բոլոր ազդակներու եւ պայմաններու մէջ է՝ն գօրաւորը ուսուցչին անձնաւորութիւնն է, որուն աչքերէն ցոյցացող նշոյլները, մատերէն կաթող ոյժի հոսանքը, բերնէն ծորող շառերը մոզակն ազդեցութիւն ունին մատղաշ հոգիներու վրէ: Այս կախարդական անձնաւորութեան մէջ չկայ բան մը որ զինքը աւելի մատչելի, համոզելի եւ օգտակար ընծայէ քան գնահատումի եւ յարգանքի գիտակից վերաբերումը: Այս ապագայ անմահներու հանդէպ: Այս զգացումն է որ պիտի ստեղծէ գուրգուրանքով զեզուն տաքուկ մթնոլորտ մը, որուն մէջ ապաստօրէն պիտի ձլին եւ պիտի սնին ապագայ Սահակներն ու Մեքրոպները, Վար-

դաններն ու Անդրանիկները, Փասթէօրներն ու Լինտպէրկները եւ բոլոր գիւցաղնական հոգիները: Հերոս մը պահուած է իւրաքանչիւր մանուկին մէջ եթէ գիտնան...:

ՅՕԴՈՒԱՄՆԵՐ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՆՍ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

1. ՃԱՆ ՊԸՆԵԸՆ

Ճան Պընեըն (կամ Յովհաննէս Պընեան) Անգլիացի մեծ քարոյիչը եւ «Քրիստոնէական Ճամբորդութիւն» կոչուած ծանօթ գրքին նաեւ շատ մը ուրիշ գրքերու հեղինակը, որ իւր հաւատքին համար Պետքօրտ քաղաքին մէջ տասներկու տարի բանտարկուեցաւ, աղքատ թիթեղագործ մ'էր: Նա ծնած էր 1628ին Անգլիոյ փոքր մէկ գիւղին մէջ: Այս տարի — 1928 — իւր ծննդեան 300րդ տարեգարծը ըլլալուն համար կը յիշուի եւ կը տօնուի միլիօններու կողմանէ բոլոր աշխարհին մէջ:

Նախկին թիթեղագործ մը եւ բանտարկեալ մը հիմայ աշխարհին զանազան երկիրներուն մէջ յարգանքի առարկայ է: Արդեօք ինչո՞ւ համար այսքան ծանօթ եւ երևելի անձ մը դարձած է, եւ ինչո՞ւ համար իր անունը ընտանեկան խօսք մը եղած է հազարներու շրթունքներուն վրայ:

Պընեանի կեանքին եւ գործին նշանակութիւնը լաւ հասկնալու համար պէտք է որ պոնէ քիչ մը տեղեկութիւն ունենանք այն ժամանակի պատմութեան վրայ: Նշուած թագուհին Անգլիոյ առաջին բողոքական իշխանուհին էր. բայց երբ իշխանական ընտանիքին մէջ բողոքական ժառանգորդ չմտնէր՝ փախաւ մէնջը որոշեց դուրսէն բողոքական թագաւոր մը հրաւիրել: Հանօվըրէն (Գերմանիայէն) Ուիլհելմ Երկրորդ կանչուեցաւ Անգլիոյ արքայական աթոռը նստելու: Այս շաբաթուրդը կոչուեցաւ «Անարիւն Յեղափոխութիւնը»: Բայց Անգլիոյ ազատամիտ ժողովուրդին մէջ կար խումբ մը՝ որոնք զո՞հ չէին պետական եկեղեցւոյ դիմակէն եւ կ'ուզէին սրբել եւ մաքրել Մայր Եկեղեցին եւ ազատութիւն տալ ամէն անձին իւր խղճման քին համեմատ հաւատալու եւ ապրելու համար: Ասոնք Փիլիփքըն կամ մաքրակրօն անուանուեցան եւ Քրամուէլի առաջնորդութեամբ

յաջողեցան Գալալիէրներուն եւ թագաւորին կուսակիցներուն յաղթել: Կարճ ժամանակի մը համար կառավարութիւնը իրենց ձեռքը անցաւ եւ Անգլիա եղաւ հասարակապետութիւն մը: Չորս տարի վերջը թագաւորութիւնը վերահաստատուեցաւ եւ Կարոլոս Բ. աթոռը ելաւ: Ասկէ վերջ Մաքրակրօնները շատ չարչարանք քաշեցին եւ սաստկապէս հալածուեցան իրենց սկզբունքներուն համար:

Ահա այս ժամանակներու միջոցին էր որ Պընեան ապրեցաւ, եւ այս պատճառաւ էր որ ձերբակալուեցաւ բանտարկուեցաւ եւ «մըշտական աքսոր»ի դատապարտուեցաւ:

Պընեանի ծնողքը աղքատ էին եւ Յովհաննէսը դպրոց չընդունաւ: Երբէք չհրեաւ կայեցին թէ իրենց որդին օր մը վաթսուն գրքերու հեղինակը պիտի ըլլար: Այս գըրքերուն ամէնն ալ հոգեւոր եւ կրօնական էին, եւ անոնց մէջ կար հատ մը՝ որ սահմանուած էր Աստուածաշունչէն վերջ մօնալաւ գիտցուած եւ ամենասիրուած գիրքը ըլլալ բոլոր աշխարհին մէջ, եւ որ ոեւէ գիրքէ մ'աւելի շատ լեզուներու պիտի թարգմանուէր բաց ի Աստուածաշունչէն:

Յովհաննէս իր երիտասարդութեանը ատեն անհոգ եւ ամբարիշտ էր: Գէշ ընկերներով կը գտնուէր եւ իւր բերանը խիստ անմաքուր էր: Կիրակին չէր յարգեր, այն օրը խաղերով անցնելով յաւ կը պատճառէր իւր ծնողներուն: Միւսնոյն ատեն իր մեղքերը զգալով գիտէր այս վարմունքին սխալ ըլլալը, բայց չէր կրնար ինքզինքը անոնցմէ ազատել: Մի քանի անգամ վտանգներէ ազատուելով զգաց Աստուծոյ նախախնամական հոգածութիւնը իւր կեանքին վրայ եւ կը փափաքէր տարբեր ընթացք մը բռնել:

Ամուսնացած ատեն ինքը եւ իր կինը տան մէջ ո՛չ պնակ եւ ո՛չ դգալ ունէին. բայց իր կինը մի քանի հոգեւոր գրքեր ունէր, որոնք մեծ ազդեցութիւն ունեցան երիտասարդ Պընեանի կեանքին վրայ: Ան սկսաւ եկեղեցի երթալ եւ ազդուեցաւ իր հոն լսած մէկ քարոյէն. հայհոյելը ձգեց եւ սկսաւ Սուրբ Գիրքը կարդալ բայց դեռ չէր գիտեր Յիսուսը իբր իր անձնական Փրկիչը եւ չէր հասկնար փրկութիւնը. միայն իր բարոյական յառաջդիմութեան համար կը հպարտանար: Միւս-

նոյն ատեն Պրնեանի խղճմտանքը արթնցած էր և հոգևոր նիւթեր կը գրաւէին իւր ուշադրութիւնը:

Օր մը Պետֆորտ քաղաքը գնաց իւր արհեստը շարունակելու համար, ուր հանդիպեցաւ չորս պառաւանդներուն որոնք գրան առջեւ արեւը նստած կը խօսակցէին մեղքի, Աստուծոյ, սիրոյ և խոստումներու մխիթարութեան վրայով: Պրնեան անոնց խօսքին մտիկ ըրաւ, յուզուեցաւ և սկսաւ Սուրբ Գիրքը կարդալ նոր աչքով: Ան կարդաց Ա. Կորն. 12.9 և զգաց իւր մեծ պէտքը հաւատքի համար: Յետոյ փորձուեցաւ իւր հաւատքը փորձել հըրաշքներ գործելով և ճամբուն մէջ գտնուած չոր տեղերուն «թաց եղէք» և թաց տեղերուն «չորցէ՛ք» ըսելով: Բայց այս փորձանքին զէմ զնելով ցանկին տակը ծռնելի վրայ եկաւ և աղօթեց: Պետֆորտի այն պառաւանդներուն պէս երջանիկ ըլլալ կը փափաքէր, բայց շատ մը տարակոյսներ միշտ իրեն կը յարձակէին և նորէն կ'իշխար խաւարին մէջ: Կրկին կը մխիթարուէր Սուրբ Գիրքին մէջ կարգալով Առկ. 14. 22 և ուրիշ համարներ և հասկնալով թէ իրեն համար յոյս և ներդրութիւն կայ: Լուտերի Գաղատացւոյ վրայ գրած մեղեդիութեան գրքէն շատ օգտուելով քայլ առ քայլ յառաջ կ'երթար սուրբ կեանքին մէջ: Յետոյ միտրուեցաւ 1655 ին և սկսաւ վկայութիւններ տալ ժողովներուն մէջ և քարոզել տուններու և գաւառներու մէջ: Քիչ վերջը ձեռնադրուեցաւ իրր քարոզիչ և հինգ տարի աշխատեցաւ այս ասպարէզին մէջ:

Օր մը երբ կը քարոզէր ձերբակալուեցաւ և բանտարկուեցաւ, որովհետեւ չէր հետեւեր պիտական եկեղեցւոյ սովորութիւններուն և կանոններուն: Տասներկու տարի մնաց բանտին մէջ. միշտ կը մտածէր և հոգ կ'ընէր իւր ընտանիքին վրայ, որ հիմայ հինգ անձերէ կը բաղկանար, կինը և չորս պառաւանդը որոնց մէկը՝ Մէյրի անունով փոքր աղջիկ մը՝ կատարելապէս կոյր էր և շատ սիրելի իւր հօրը:

Տասներկու տարի բանտը մնալ շատերուն համար պիտի ըլլար վերջին աստիճան անտանելի և գոռուր վիճակ մը, բայց Պրնեան առիթէն օգտուելու կ'աշխատէր միշտ: Իւր բուն գործն էր կօշիկի կապ շինել. ան գործը հաւատարմութեամբ կատարելէ զատ կը գործածէր իւր ժամանակը սերտելով, կարգալով

և գրելով: Բանտին մէջ գտնուած ատեն շատ մը զիրքեր գրեց՝ որոնց տասը հատը լոյս տեսան իւր բանտարկութեան միջոցին. սակայն իւր ամենածանօթ գիրքը, այսինքն «Քրիստոնէական Ճամբորդութիւնը», թէ եւ զրուեցաւ բանտին մէջ բայց հրատարակուեցաւ իւր ազատուելէն վերջ:

Պրնեանի գրութիւնը և քարոզութիւնը կուտակաւ չէին. կը քարոզէր միշտ Յիսուս Քրիստոսով եղած փրկութիւնը: Իւր վերջին քարոզին նիւթն էր Յովհ. 1. 13 համարը: Երբ քարոզէր Լոնտոնի մէջ 3000 անձեր ներկայ կ'ըլլային իրեն մտիկ ընելու: Իբր հովիւ շատ ժամանակ կուտար իր պարտականութիւններուն. հիւանդները յաճախ կ'այցելէր և անհատներուն փրկութեան համար կ'աշխատէր առանց յոգնելու:

Իր գրութիւններուն մէջ կը գործածէր շատ յստակ և մաքուր լեզու մը: Անգլիական մեծ գրագէտ Մագօլի կ'ըսէ Պրնեանի զլսաւոր գործին վրայ. «Այդ զարմանալի գրքին վրայ կը զարմանան ամենագիտութեամբ քննադատները: Միևնոյն ատեն ան կը սիրուի պարզամիտներէն որոնք կարող չեն զայն գնահատել»: Եւ ծանօթ Ամերիկացի բանախօս մը բոլոր Անգլիէրէն լեզուի մէջ է՝ն գեղեցիկ կտորը կը նկատէ այն յօդուածը՝ ուր բացատրուած է Հաստատունի անցնիլը մահուան գետէն: Եւ զարմանալի իրողութիւն մըն է որ ազէտ թիթեղազոր մը Անգլիոյ երեւիլի գրագէտներէն մէկը եղած է և զօրաւոր կերպով ազգած է թէ գրականութեան և թէ կրօնական շրջանակներուն վերայ: Ահա հոս կը տեսնենք Աստուծոյ հոգւոյն գործունէութիւնը և զօրութիւնը որ կարող եղած է շատ հոստարակ անձ մը փոխակերպել և գործածել որոշ կերպով իւր նպատակը ի գործ դնելու համար և ձգել տալ նոր տպաւորութիւնը երեք դարերու վրայ:

Ի. ՄԷՐԸԼ

ԿԱԹՈՒԼ ՄԸ ԳՈՒԹ

«Եթէ մանանիսի հատի չափ հաւատք ունենաք, այս լերանը պիտի ըսէք, ասկէ անդին փոխադրուէ և պիտի փոխադրուի ու բան մը անհնարին պիտի չըլլայ ձեզի» ըսաւ Յիսուս պաշտելի փրկիչը: Եւ ևս կը խորհիմ

թէ երբ կաթիլ մը գուլթ ունենայինք մեր անապատացած, ծարաւի սիրտը զովացնող, այդ մանանեխի հատի չափ հաւատքը ինքնաբերարար պիտի ունենայինք խորսխելու համար մեր ալեկոծ նաւակը Սիրոյ անսահման ովկիանոսը եզող Աստուծոյ սրտին անչափելի խորունկութիւնները, ուրկէ յաւիտենական կեանքի վտակները կը բղխեցնեն՝ Սիրոյ ու Գթութեան մարմացում՝ պաշտելի Փրկիչը։

Մինչ որ կրամով հարուստը ծիրանի ու բահելի հագուստներ հագած ամէն օր փառաւորապէս ուրախութիւն կընէր՝ ասդին իր զըրանը առջեւ աղքատ Ղազարոսին սիրտը թաւախտ վերքերու անչէջ կրակներով կը խանձուէր, և անբարբառ հառաչանքներով իր արտասուածքով աչքերուն աղու նայուածքները պուտ մը ջուր, կաթիլ մը գուլթ կը հայցէին որովայնապաշտ հարուստէն։ Սակայն ի գուր, աղքատ Ղազարոս անոր աչքին՝ իր թաւախտ վերքերը լցող շուններու չափ խիւարժէք չուներ։

Ասիկա առակ մըն է՝ որ իր անհուն սիրոյ ովկիանոս մաքուր սրտին խորերէն վառ երեւակայութեամբ մը ստեղծագործեց Յիսուս մեր պաշտելի Փրկիչը զթասիրտ։

Հարուստ թէ աղքատ, գիտուն թէ անգիտ, զօրաւոր թէ տկար, մեղմէ իւրաքանչիւրը դատապարտեալի աթոռին վրայ կը նստեցնէ Յիսուս իր այս առակովը։ Հոգ չէ թէ միլիօնատէր հարուստ մը չենք. բաւ է որ Բարի Սամարացիին պուտ մը ջուրը չունինք վիրաւոր ճամբորդին այրած սիրտը զովացնելու, սպեղանի մը չունինք անոր ցաւերը ամօքելու, կաթիլ մը գուլթ և տաքուկ սիրտ մը չունինք անոր յոգնած ու բեռնաւորութեամբ հոգւոյն հանգիստ տալու։ Դատապարտեալի աթոռին վրայ ենք, քանի որ որբեւայրի կնոջ երկու լուման, մեր բոլոր ունեցածը՝ ի տես տառապող մարդկութեան ծովածաւալ պէտքերուն, թոքախտաւոր Ղազարոսներուն, օրական չոր հացին, պուտ մը գով ջուրի կարօտ և վարչահոտ հիւղակներու ապականած մթնոլորտին մէջ հիւծող ու մաշող գաղթականներու սիրոյն զոհելու կաթիլ մը գուլթ չունենալու չափ անզգայ, նիւթապաշտ, խոզացած սիրտ մը ունինք։

Առեղծուած մըն է Յիսուս. Անոր աչքերը մեր աչքերէն և խորհուրդները մերիննե-

րէն անհունօրէն տարբեր ու բարձր են։ Ի տես որովայնապաշտ ու մօտայապաշտ մարդկութեան և թաւախտաւոր Ղազարոսներու՝ յաւիտենական յայտնութեան երկնային տեսարաններ տեսան իր աստուածային այն աչքերը։

Փոխանակ աղքատ Ղազարոսներու խնդճալու և անոնց թաւախտ վերքերով այրած սիրտը տեսնելու՝ որկրամոլ և ունայնապաշտ հարուստներուն կը խղճայ ու կ'արգահատի, և անոնց անառակ սիրտը կրակներու մէջ տապկուած կը տեսնէ։ Հարուստը չէր զգար իր այս արգահատելի վիճակը, անոր համար որ իր սիրտը խոզացած էր. խոզը ցիխերու մէջ տապալս կելու աստիւն ինքզինքը ձիւնի պէս ճիւղմալ բուրդէն փափուկ անկողնի մը մէջ կը նկատէ։ Տապուլ գուռնայէն ահանջները այնքան կոշտացած էին որ տիկերքի երաժշտականութիւնը չէր լսուր։ Սակայն Յիսուս որուն աչքերը վարժուած էին հոգւոյն պատուհաններէն յաւիտենական Աստուծոյ սիրոյ երկնափայլ փառքը զիտելու և ահանջները ընտելացած էին Սէր հեղող Աստուծոյ մեղմահնչիւն և հոգեպարար երաժշտականութիւնը լսելու, կը պժղար իտես մօտայապաշտ հաճոյամոլ մարդկութեան խոզացած կեանքին և ի լուր կոշտ ու կոպիտ տապուլ գուռնային։

Երանի քեզի, ո՞վ վիրաւոր ճամբորդ, աղքատ Ղազարոս, յոգնած ու բեռնաւորութեամբ մարդկութեան, դու'ն հաւատքի հօր Արքահամի ծոցին մէջ ևս, քու սերունդդ երկինքի աստղերուն և ծովու աւազներուն չափ պիտի բազմանայ, բոլոր ազգեր քեզմով պիտի օրհնուին։ Ժամանակ պիտի գայ և եկած ալ է իրը մարդիկ «Իրենց շուններուն անունը ներսնեն» — ինչպէս հեղինակ մը ըսած է — Պիղատոսներ, Կայափաներ, Ղեւտացիներ, հաճոյամոլ և որովայնապաշտներ պիտի զընեն, բայց իրենց գաւազներուն՝ աղքատ Ղազարոսներ, խաչեալ Յիսուսներ, չղթալակապ Պօղոսներ, Բարի Սամարացիներ։ Մարդկութիւնը պիտի տեսնէ որ նիւթապաշտութիւնը, ևսամոլութիւնն ու մօտայապաշտութիւնը ստորին կեանք մ'է. իսկ սէրը, գուլթը, ճշմարտութիւնը և ծառայութիւնը Աստուծոյ կեանք, յաւիտենական կեանք է։ Որքան լոյսը խաւարէն, արեւելքը արեւմուտքէն այնքան ալ ևսամոլութիւնը հեռու պիտի ըլլայ

մարդոցմէ: «Ա՛հր ու ձեր մէջտեղ մեծ ան-
դունդ մը կայ հաստատուած...»: Անոնք
իրենց խնճոցքը, ուրախութիւնն ու վառքը՝
հիւանդանոցներ և անկեղանոցներ, դպրոցներ
ու եկեղեցիներ շինելու մէջ պիտի փնտռեն:
Քանզի ալ սորված պիտի ըլլան սա յաւիտե-
նական ճշմարտութիւնը թէ սէրը մարդուն
մէջ՝ Աստուած է մարդուն մէջ: Ան որ կը սի-
րէ Աստուծոյ ծնած է և կը ճանչնայ զայն,
զի Աստուած սէր է (Ա. Յովհ. 4. 7, 8): Ա՛յ
մարդիկ պիտի հասկնան թէ աղքատ Ղազա-
րոսը տիեզերքի գերազոյն արժէքն է, քան-
զի ան Աստուծոյ որդի է. և Նարեկացիին հետ
պիտի ձայնակցին այս հոգեբուխ աղօթքին
մէջ թէ «ոչ ի տուրսն այլ ի տուողին յաւէտ
կարօտիմ. ոչ հարսանեկան խնճոցից այլ
փեսային անձկութեամբ մաշիմ»: Եթէ դուն
գիտնայիր ու հաւատայիր թէ այս ջրհորը
պարգեւողը՝ Սիրոյ աղբիւր, յաւիտենական
Աստուած, երկնաւոր հայրդ է գթառատ և
նաեւ եթէ գիտնայիր որ այս ծարաւի ու յոգ-
նած մարդը Սէր, գութ եղող քու հօրդ սիրա-
սուն զաւակն է, դուն, խոգացած, այլասե-
րած, հաճոյամոլ մարդկութիւն, յաւիտենա-
կան կեանքի աղբիւրը, խանձուող սիրտդ զո-
վացնող ջուրի վտակները՝ գթութեան, ծա-
ռայութեան և սիրոյ մէջ պիտի փնտռէիր:

Կաթիլ մը գութ կթէ ունենայինք, այո
եթէ գիտնանք թէ գութը մեր մէջ՝ Աստուած
է մեր մէջ, այն ատեն մասնաճիւղի հատի չափ
հաւատք ալ պիտի ունենանք լեռները տեղա-
փոխելու, տիեզերքը յեղաշրջելու, Աստուծոյ
թագաւորութիւնը հաստատելու, աշխարհը
գրախտի վերածելու:

Գանիրե

Հ. Յ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԲԱՆԻ ԿԱՐՈՂ ԵՆՔ

Նաւավար մը օր մը ովկիանոսի ջուրե-
րուն վրայ յառաջացած պահուն հեռուէն ա-
ղէտի նշան մը կը նշմարէ: Դիտակը այդ
կէտին կը դարձնէ և փայտի բեկորի մը վրայ
մարդ մը կը տեսնէ: Զայն աղատելու համար
պէտք էր որ բաւական ժամանակ վատնելով
նաւը իր ընթացքէն չեղէր: Այս պատճառով
«Ո՛յ», ըսու նաւավարը, «ուրիշ նաւ մը կ'ա-
զատէ գայն», և շարունակելով իր գնացքը
կունուի նաւահանգիստ հասաւ և որուն հա-

մար գովեստի արժանացաւ: Սակայն չկըր-
ցաւ իր յիշողութիւնէն հեռացնել ծովու վրայ
տեսնուած աղէտի նշանը և տեսքը նաւաբեկ-
եալ մարդուն որ կորսուելու գատապարտուած
էր. ցորեկ գիշեր այդ պատկերը գինք կը չար-
չարէր:

Մեր առօրեայ զբաղումներու հապճեպին
մէջ երբ անձկութեան նշանները տեսնենք
կեանքի ամենի ովկիանոսին վրայ և տարու-
րերող հոգիներու դառն կոծը լսենք կատա-
ղի ալիքներու վրայ, ուշադրութիւն կ'ընենք
այդ նշաններուն, մտիկ կ'ընենք այդ ձայ-
ներուն և կը դառնա՞նք դէպի այդ կողմը՝
մոռնալով մեր զբաղումները, հաճոյքը, հան-
գիստը, չա՛հն ու մեր սին փառամոլութիւն-
ները, օգնելու այն հոգիներուն որոնք կո-
րուստի ենթակայ են, թէ ոչ կ'աճապարենք
և կ'ըսենք թէ ժամանակ չունինք մեր եղ-
բայները փրկելու, անկալը վերցնելու եւ
արցունքները սրբելու: Եւ եթէ չգառնանք
օգնելու կամ փրկելու՝ յաւիտենականութեան
մէջ խորունկ կերպով պիտի վշտանանք վեր-
ջիշելով աղէտաւններու ազաղակները, որոնք
մեզ օգնութեան կանչեցին սակայն պատաս-
խան չընդունեցին, և որոնք անօգնական
միացին յանձնուած կատաղի ալիքներու:

ԹԻԳՐ. Պ. Լ.

ԲՆԱԿԱՆ ԴԻՏՈՒԹԵԱՆ ԵՐԵՐ ԴՍՐԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԿԱՐՃ ԱԿՆԱՐԿ ՄԸ

ԴՐԵՑ ՏՐ. ՈՒ. Ֆ. Ժ. ՍՈՒԷՆ

Ասկէ երեք հազար տարի առաջ ապրող
Եգիպտոսի թագաւորներէն մէկուն՝ Թութան-
խամէնի գերեզմանին մէջ գտնուած թանկար-
ժէք առարկաները, որոնք արդի էն դժուա-
րահաճ վարպետներուն իսկ հիացումին ա-
ռարկայ եղան, կը ցուցնեն թէ այդ ատե-
նուան արհեստագիտութիւնը և գեղարուեստը
որչափ յառաջ գացած էին: Բայց հին քաղա-
քակրթութիւններու ունէ մէկուն մէջ բնու-
թեան օրէնքներու մեծ դրութեան մասին
զաղափարի մը ստուերն իսկ չենք գտներ:

Եթէ պատմութեան արշալոյսէն մինչեւ
ներկայ ժամանակ տեղող շրջանը օր մը նկա-
տենք, պիտի տեսնենք որ այդ օրուան 23
ժամերը ամուլ ժամանակամիջոց կը կազմեն:

գիտութեան յառաջգիմութիւնը նկատի առնելով, եւ միայն վերջին ժամուն մէջ է որ գիտութիւնը ծնած է. եւ անոր վերջին 10 վայրկեաններուն մէջ, այսինքն վերջին 25 տարիներու շրջանին միայն զօրաւոր յառաջգիմական թափ մը ստացած է:

Ասկէ 300 տարիներ առաջ աշխարհը՝ երբ անբնութեան դաղտնի ճշմարտութիւնները փնտռելու հազիւ կը համարձակէր՝ երեք մեծ խաչընդոտներու սոջիւ կը գտնուէր. — նախապաշարում, եկեղեցական իշխանութիւն եւ սօկիմայապաշտութիւն, այսինքն առանց փորձառական մեթոտի երեւակայութեամբ յղացուած եւ հին դարերու կեղծ փրկիսօփայութեան հաստատ գաղափարներու զրուծիւն: Այն ատեն գիտական մտածումը սա վարկածին վրայ հաստատուած էր թէ Արիստոտելի գրութիւնները բաձարձակ հեղինակութիւն կը կազմեն՝ բոլոր գիտական տարակարծութիւնները եւ հարցերը լուծելու համար: Արեստոտելի աշակերտներէն մէկուն երեւակայական գաղափարներէն իբր նմոյշ կրնանք յիշել աշխարհի կատարեալ ըլլալը փաստելու համար իր տրամաբանելու ձեւը.

«Այն մարմինները որոնցմով աշխարհը կազմուած է կարծր են, ուրեմն երեք եզրեր ունին: Երեք թիւը էն կատարեալն է. ուրով հետեւ մեկը թիւ չենք նկատեր, երկուքը՝ պակաս թիւ մ'է, եւ միայն երեքը առաջին թիւն է զոր ամբողջ կը կոչենք: Նամանաւանդ ան առաջին մը միջին մը, եւ վերջին մ'ունի:»

ԺՁ. դարու վերջերը երիտասարդ Կալիլէօն (1564-1642) Փիզայի համալսարանը կը գտնենք, ուր օրական 10 դրուշ (ընթացիկ արծաթ դրամ) թոշակով ուսողութեան փրօֆէսօրի աթոռը կը զբաւէր: Ան մեծապէս կը հետաքրքրուէր ինկոզ մարմիններու մէջ զործող օրէնքները գտնելու. եւ հակառակ Արիստոտելի այն կարծիքին թէ մարմինները իրենց ծանրութեան համեմատական արագութեամբ կ'յնան՝ Կալիլէօ պնդեց թէ ծանր եւ թեթեւ բոլոր մարմինները միեւնոյն արագութեամբ կ'յնան: Այս յեղափոխական կարծիքը գիտական շրջանակներու մէջ զայրոյթ յառաջ բերաւ: Կալիլէօ իր գտած օրէնքը փաստելու համար Փիզայի ծռող աշտարակին զագաթէն երկու տարբեր ծանրութիւններ — մէկը 150 տիրհէմ եւ միւսը 36 հօգա—

վարը ձգեց, որոնք օրուան բոլոր գիտուններուն ներկայութեան միեւնոյն ատեն գետինը հասան: Այս փորձը բաւական չէր այդ միտքերը համոզելու Կալիլէօյի օրէնքին ճշմարտութեան, քանզի գիտութեան մէջ վերջին խօսքը Արիստոտելի կը պատկանէր:

Կալիլէօ իր հիւսադիտակը հնարեց՝ իր համալսարանը զինքը պատուեց իր թոշակը կրկնապատկելով, բայց շատերը տարակոյսով ընդունեցին անոր միջոցաւ գտնուած գիտական ծանօթութիւնները: Այս գործիքով մեծ գիտունը գտաւ թէ լուսինը մեր երկրին նման լեռներ ունի, արեւը բլծիւր ունի, եւ նամանաւանդ (նիւթիքը) լուսնի իր կրկին լուսնին նման չորս արբանեակներ ունի: Մեծանուն Քէփլէր իսկ անհանգիստ եղաւ այս ցննցիչ լուրը լսելով, որովհետեւ օրուան տիրող կարծիքը այն էր թէ մոլորակներու թիւը հօթէն աւելի չէր կրնար ըլլալ, — երկիր, լուսին — փայլածու (մեթիսթի), արուսեակ, հըրատ, լուսնիմպ եւ երեւակ: Այս փաստելու համար Ֆրանչէսքօ, Սիզի, Ֆլօրէնցի ժամանակակից աստղագէտ մը, այսպէս կըսէր. «Գլխուն վրայ եօթը պատուհաններ կան, երկու ոտնգեր, երկու աչքեր, երկու աւկանջներ եւ բերան մը. այսպէս ալ երկինքի վրայ եօթը աստղեր կան երկուքը բարեկամ, երկուքը ոչ-բարեկամ, երկուքը լուսատու եւ մէկը տակաւին անորոշ: Ասոնք եւ բնութեան մէջ տեսնուած ուրիշ նամանորինակ երեւոյթներ, օրինակ եօթը մետաղները, եւ այլն, կը ցուցնեն թէ մոլորակներու թիւը անպատճառ եօթը պէտք է ըլլայ: ... Հրեաները եւ ուրիշ հին ազգերը եւ ներկայիս Եւրոպացիները շարաթը բաժնած են եօթը օրերու, որոնք իրենց անունները եօթը մոլորակներէն կ'առնեն: Եթէ մենք մոլորակներու թիւը աւելցնենք բոլոր այս զրուծիւնը հիմէն կը քանդուի:»

Կալիլէօն էր որ գտաւ, մոլորակներէն սկսեալ մինչեւ հիւլէնները, բոլոր մարմիններու շարժումներուն մէջ տիրող օրէնքները, գործածելով ոչ թէ իր երեւակայութիւնը այլ փորձառական մեթոտը, որուն կը պարտի աշխարհը իր յառաջգիմութիւնը գիտական մարգին մէջ:

Կալիլէօյի մեռած տարին ծնաւ Իսահակ Նեւտոն (1642—1727), որ շատերուն կողմանէ

բոլոր ժամանակներու մեծագոյն հանճարը նկատուած է: Ներկայիս բնագէտի մը գործն է պոնել տիեզերքին մէջ պատահող բազմազան երևոյթներուն փոխարարներութիւնները, եւ մի քանի հիմնական սկզբունքներու զանազան ձեւերով յայտնուումը բնութեան գործունէութեանց մէջ: Ահա այս դրութեան մը վերածելու մտային աշխատանքին մէջ մեծագոյն առաջնորդը հանդիսացաւ Նեւտոն: Այս Անգլիացի գիտունը իր «Բրիւնսիլիս» անուն հեղինակութեան մէջ, որ «մարդկային իմացականութեան բոլոր սրտադրութիւններուն իշխանը» նկատուած է Մարքիզ Լա Փլասի կողմանէ, երկիրքի ճակատագիրը վարող հիմնական սկզբունքներուն հիանալի պարզութիւնը ցուցուց:

Նեւտոն ցուցուց թէ Կալիլէոյի շարժումի օրէնքները՝ արեգակէն ծագում առնող ձգողութեան ոյժին ազդեցութեան տակ գործելով՝ բաւական են վարելու բոլոր երկնային մարմիններու շարժումները, յառաջ բերելու՝ մոկլընթացութիւնը եւ տեղատուութիւնը, երկրին առանցքին ծովը եւ անոր տափանալը իր բեւեռներուն վրայ: Ասոնք եւ ասոնց նման ուրիշ շատ մը բաներ պարզ կերպով բացատրուեցան «Բրիւնսիլիս»-ի մէջ, եւ աստեղագիտութիւնը թօթափելով՝ երեւակայական անհեթեթ գաղափարներու պատանքը կենդանացաւ եւ կարգաւորեալ եւ կանոնաւոր վիճակ մը ստացաւ, որուն կ'աւանարկէ Պապի սա Նշանաւոր խօսքը. «Բնութիւնը եւ բնութեան օրէնքները զիշերին մէջ ծածկուած կը մնային, Աստուած ըսաւ. (Նեւտոն ըլլայ) եւ ամեն բան լուսաւորուեցաւ»:

Թէպէտ բնութիւնը Նեւտոնի գաղտնի մնացած իր շատ մը գանձերը մեզի պարզած է այսօր, շատ քիչեր պիտի գտնուին՝ որոնք «Բրիւնսիլիս»-ի միջոցաւ առնուած մեծ քայլը գնահատելու համար Հալլէի չպիտի միանան այդ մեծ երկի իր գովաբանութեան մէջ, «Մարդ չի կրնար աստուածներու ա'յսչափ մօտ երթալ»:

Երբ հանճար մը պատճառ կ'ըլլայ որ գիտութիւնը իր ժամանակակիցներուն տեսողութեան սահմանէն անդին ոտտում մը կատարէ, ընդհանրապէս անոր կը յաջորդէ անկումի շրջան մը: Նեւտոնէն վերջ ալ սկսաւ այսպիսի շրջան մը, որուն միջոցին նոր շա-

ւիղներ չգտնուեցան, մինչեւ որ ասկէ գրեթէ դար մը առաջ տիեզերական ճարտարագիտութեան ուրիշ մէկ էջը դարձուեցաւ, որուն խորագիրն էր ելեկտրականութիւնը:

[Շարունակելի]

Անկոպեց Տ. Ճ. Խ.

ՍԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԿԱՄԱՒՈՐ ԳԵՐՈՆ

1605 տարուան ամառնային գեղեցիկ առաւօտ մ'էր. Լիոնի ծոցէն նաւ մը կը նաւարկէր դէպ ի կապոյտ, գեղանի Միջերկրականի բացերը: Հազիւ Փրանսական սիրուն եզերքը անհրեւութեամբ էր՝ երբ դէմէն յանկարծ երեք հոտ ճերմակ առագաստներով նաւեր երեւան ելան: Նաւապետին փորձառու նաւաւորները իսկոյն կըրցաւ զանազան թէ կկողները ծովահէնի նաւեր էին: Այո՛, Ափրիկեցի մահմետական ծովահէններ էին՝ որոնք նոր գերիներու ու ճոխ աւարի ակնկալութեամբ անմիջապէս Փրանսական նաւուն վրայ յարձակեցան: Ի՞նչ վարմանալի արագութեամբ կը շարժէին... զանոնք շարժող խորհրդաւոր ոյժը ոչ թէ շոգիլի ոյժը՝ այլ, աւա՛ղ, քրիստոնեայ թիավարներու բազուկներն էին, ու այդ քրիստոնեաները շղթայուած գերիներ էին: Փոքր կռիւէ մը ետք Փրանսական նաւը անձնատուր եղաւ, եւ այդ երեք նաւերը բազէի մը նման նետուեցան իրենց որսին վըրայ: Նաւապետը իսկոյն սպաննուեցաւ, ճամբորդներէն երեքը կռուի ատեն սպաննուած էին արգէն, իսկ միւսները՝ ամէնն ալ վիրաւորուած՝ անմիջապէս շղթայի վարնուեցան իբր գերի, եւ նաւն ու անոր պարունակութիւնը իբր պատերազմական աւար գրաւուեցան:

Այս գերիներուն մէջ Վէնսան տը Փօլ անունով երիտասարդ քահանայ մը կար. ասիկայ որդին էր Լանկլետօքցի երկրագործի մը՝ որ զայն քահանայ ընելու համար ջանք խնայած չէր, մինչեւ իսկ իր լծկան հղները ծախելով զայն գողէճ խրկած ու վերջապէս իր փափաքին հասած էր: Այս քահանան, իր մօր ազգականներէն միոյն մահուամբ, բաւական մեծ գումար մը ժառանգած էր. դրամն առնելու նպատակաւ Մարսիլիա գացած, դրամն առած հո պիտի գառնար՝ երբ

բարեկամներու խորհուրդովը նախամեծար համարեց ծովու ճամբով հայրենիք վերադառնալ, և այս կերպով քիչ մը զուարճանալ: Սակայն ճիշտ այդ ճամբորդութեամբ էր որ իր դրամը կոշտ պարտուած էր, ու ինք շղթայի զարնուած, և ո՛վ վրտէ, թերեւս ցկեանս զերի ըլլալու դատապարտուած: Ճակատագրին խաղցած խաղերը որքա՞ն դառն են երբեմն:

Եօթը օր ճամբորդելէն վերջ Ագրիկէի ծովեզերքը ելան. նոր գերիներուն իրենց յատուկ կապոյտ ու ճերմակ լաթերը հագցուցին, և զանոնք թունուզ տարին ծախելու ճամար: Հոն Վէնսան տը ֆօլ Մաւրիտանացի բժիշկի մը ծախուեցաւ. այս բժիշկը մեր այսօրուան բժիշկներուն պէս զբաղուած չունէր, այլ իր ժամանակի բժիշկներուն նման քանի մը տեսակ զեղերու սրուակները կը շարէր իր խանութին մէջ, իսկ ինքը՝ զլուխը ճերմակ փաթթոյ մը կապած՝ ծալապատիկ կը նստէր իր գեղերուն քով, ու սիկար ծխելով և երբեմն ալ մրափելով ժամանակ կ'անցնէր ծուլօրէն: Այս բժիշկը երկտասարդ քահանային զիտութենէն շատ օգտուեցաւ, և ի վերջոյ զինքը այնչափ սիրեց, որ անոր Մահմետական ըլլալ առաջարկեց՝ խոստանալով որ իր բոլոր հարստութեանը ժառանգ պիտի ընէր զայն ու գերութենէ պիտի ազատէր: Քահանան երբէք չհաւանեցաւ ընդունելու մատուցուած առաջարկը:

Տարի մը ետքը բժիշկը մեռաւ, և իր քեռորդին՝ Վէնսան տը ֆօլը ծախեց ուրիշի մը: Այս նոր տէրը շատ հարուստ ազնուական մ'էր՝ որը թէ և մահմետական՝ բայց միւսնոյն

ատեն կը սիրէր լսել քրիստոնէութեան և քրիստոնէից վրայով: Հետեւաբար շատ ուրախ եղաւ իր նոր գերիին համար, որը իրեն թէ դասատու եղաւ և թէ առաջնորդ քրիստոնէութիւնը ընդունելու համար: Քիչ ետքը այս մարդը իր գերիին հետ թունուզէն փախաւ Ֆրանսա գնաց, որպէսզի ազատի ստոյգ մահէն՝ որ կրօնափոխ եղող բոլոր մահմետականներուն միակ դատաւճիռն էր այն ատեն: (Հարունակելի)

ԾՆՈՂԱՍԷՐ ԶԱՒԱԿՆԵՐ

Զուլիցերիացի հայր մը հիւանդացաւ, որուն վիճակը սկսաւ վտանգաւոր հանգամանք մը ստանալ: Այս հօր երկու պատանի զաւակները հասկցան թէ իրենց հայրը կրնայ բուժուիլ իթէ կրնան ծանօթ գեղ մը գործածել: Դիպը շատ սուղ էր, իսկ իրենք աղքատ ըլլալով չէին կրնար պէտք եղած գումարը վաճարելով զայն ստանալ: Այս երկու եղբայրները շատ կը սիրէին իրենց հայրը, և պատրաստ էին ամէն գոհողութեան: Վերջապէս լսեցին թէ Անգլիացի մը կ'ուզէր գոյգ մը արծուի ձագեր, մեծ գումարի մը փոխարէն: Միակ բոյնը լերան գագաթը ցից անմատչելի ժայռի մը վրայ կը գտնուէր, հետեւաբար ոչ մէկը չհամարձակեցաւ փորձել դէպ ի հոն մագլցել: Այս պատանիները իրենց հօրը հանդէպ ունեցած սէրէն մղուած յանդգնեցան այս վտագաւոր փորձը կատարելու, մագլցեցան դէպ ի այդ օդային արծուի բոյնը, բռնեցին զոյգ մը ձագերը և ծախեցին ճամբորդին, որուն վրձարած զրամով, զնեցին պէտք եղած գեղը, որով բուժուեցաւ իրենց սիրելի հայրը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԿՐԱԿԱՆ

Եթէ գիտնան

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Ճան Պրենքն

Կարիշ մը գութ

ՊԱՏ. Հ. Յ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Բանի կարող եմք

Թարգմ. Պ. Լ.

Պատուիրէն յնախան գիտութեանց

ՏՐ. ՈՒ. Ֆ. ՍՈՒԷՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթական երկշաբաթաթերթ:

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Խրլորեան

ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 Մէճիտ
Արտօնահամար » » 1 Տօլար

Հասցէ—

NOR AVEDAPER

B. P. 287

ALEP SYRIE